ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ»
Փակ բաժնետիրական ընկերություն

Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, 0910, ք. Մեծամոր, հեռ./ֆաքս - (37410) 28 06 69, (37410) 28 85 80,
կապի օպերատոր - (37410) 73 98 30, էլ.փոստ - anpp@anpp.am, anpp@haek.am

№ E/13/1418-22 առ "23" 06 2022թ.

«Լանիգերա» ՍՊԸ-ի տնօրեն
պրն Գ. Մարիկյանին

[Ծանուցում ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-39/22-5-01/095
պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու վերաբերյալ]

Հարգելի՛ պարոն Մարիկյան,

«ՀԱԷԿ» ՓԲԸ կարիքների համար ռելեների ձեռքբերման նպատակով 2022թ. փետրվարի 16-ին հրապարակված «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-39/22» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի և «Լանիգերա» ՍՊԸ-ի միջև 2022թ. ապրիլի 20-ին կնքվել է թիվ ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-39/22-5-01/095 պայմանագիրը (այսուհետև պայմանագիր)՝ 9282000 (ինը միլիոն երկու հարյուր ութսուներկու հազար) ՀՀ դրամ ընդհանուր գնով: Համաձայն պայմանագրի հավելված № 1-ի (Տեխնիկական բնութագիր–գնման ժամանակացույց) ռելեների մատակարարման ժամկետ է սահմանվել պայմանագիրը կնքելուց հետո 45 օրացուցային օր՝ մինչև 03.06.2022թ.:

Սույն թվականի մայիսի 30-ին մատակարարվել են ռելեներ (հարկային-հաշիվ Ա № 62846478387 և Ա №0031541220 առ 30.05.2022թ) 8874000 (ութ միլիոն ութ հարյուր յոթանասունչորս հազար) ՀՀ դրամ ընդհանուր արժեքով:

Պայմանագրի 34-րդ չափաբաժնի РТФ-6М ֆիլտր-ռելեի փոխարեն մատակարարված ВЭ-1101 ռելեն, որը ներառված չի եղել Հարկային հաշվում, ընդունելի չի «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի համար, որի մասին տեղեկացվել եք բանավոր և գրավոր (մուտքային վերահսկողության ակտ № 06.22-188 առ 03.06.2022թ.), միաժամանակ առաջարկվել է թույլատրելի ժամկետում փոխարինել՝ պայմանագրի պահանջներին համապատասխանող ռելեով:

Տեղեկացնում ենք, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն պայմանագրի 2.1.7 կետի համաձայն <u>միակողմանի մասնակի լուծում է «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի և «Լանիգերա» ՍՊԸ-ի միջև 2022թ. ապրիլի 20-ին կնքված թիվ ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-39/22-5-01/095 պայմանագիրը 408000 (չորս հարյուր ութ հազար) ՀՀ դրամ գումարի չափով</u>: Հայտնում ենք նաև, որ Ձեր կազմակերպության նկատմամբ կկիրառվեն նաև պայմանագրի 6-րդ կետով սահմանված տույժը և տուգանքը, ինչպես նաև ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն Որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 45-րդ կետի պահանջները:

Գլխավոր տնօրենի տեղակալ,
ընդհանուր հարցերի գծով տնօրեն՝ **Ս. Հ.Մաթևոսյան**

Կազմեց՝
ԳԲ առաջատար մասնագետ՝
Ա. Գրիգորյան
Հեռ. 010-28-29-60, 33-08